

կերպով կրօնականն ո՛ր եւ է շարժումներու հանդէպ պիտի յուզուէր եւ այսպիսի յուզում մը չէր կրնար ապարդիւն մնալ:

Ուշագրութիւն բռէք նոյն իսկ Հայոց հեթանոսական կրօնի ժամանակներուն եւ ետքը՝ քրիստոնէական կեանքի արտաքին եւ ներքին՝ յուզումներու մէջ կրած ազդեցութիւններուն եւ պիտի տեսնէք որ Հայք միշտ ազդեցութեան տակ են: — Իրենց հեթանոսութիւնը կ'ազդուի յունական, ասորական, մագդէական կրօններէ: Իրենց քրիստոնէութիւնը կամ եկեղեցին կ'ազդուի ուրիշ եկեղեցիներէ: Եւ սակայն իրաց այն վիճակին Հայք կը կաղապարեն, կ'ազգայնացընեն իրենց կրօնախօսական վիճակը եւ կ'ուզեն ցոյց տալ թէ ինքնութիւն մ'ունին իրենք: Յուզումներու եւ պայքարի վիճակ մ'է ասի:

Այլտաի շրջանը՝ կրօնական յուզումներու եւ պայքարի ժամանակներու խոշոր մէկ օղակն է:

Արօնական եւ եկեղեցական խնդիրներու մէջ «+»-ի գրութեան մշակումը ապշեցուցիչ հանգամանք մ'ունի ուսման համար եւ գիտնական հմտութեան շափը ցոյց կու տայ ոչ-ուսման համար. եւ այս գրութիւնն էր որ ժամանակի ըմբռնումներուն մէջ, կարծես իր բովանդակ թափովը կը գործէր:

Այս գրութեամբ եւ այն հմտութեամբ գրուածներ՝ Ունիթօններու ժամանակէն իսկ մուտ գտած էին Հայոց մէջ եւ մշակուած բաւական ջերմեանդութեամբ եւ նշանաւոր հակազդեցութիւն մը բերած էր Սիւնեաց Գալոսի մէջ, Տա-

1 Հոս որդոսով կ'ուզենք հասկընել ոչ-քրիստոնէայ ազգերու՝ քաղաքական շահերու հետ խառն կրօնական մեծ շարժումները. իսկ Ներքինով կ'ուզենք մատնացոյց ընել քրիստոնէայ եկեղեցիներու քաղաքակրօնական յուզումներն ու պառակտումները, որոնց ամէնքն ալ հասարակէս կը փնտենն եկեղեցիներու ինքնութեան: